1 MAR 2010

Հաստատում եմ
1934 թ․ դեկտեմբերի 5-ին
ԽՍՀՄ ՖԻՆ. ԺՈՂ. ԿՈՄԻՍԱՐ—[redacted]

# ԿԱՆՈՆՆԵՐ

## ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿՅԱՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԿՈԼԵԿՏԻՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

### § 1.

*Կյանքի կոլեկտիվ ապահովագրությամբ կամավոր կերպով ապահովագրվում են այն բանվորները, ծառայողները, կոլտնտեսականները, կոոպերացված տնայնագործները, արհեստավորներն ու այլ աշխատավորները, վորոնք աշխատում են նույն ձեռնարկության, կոլտնտեսության, արտելի, ՄՏԿ-ի, խորհտնտեսության և այլ կազմակերպության մեջ։*

*Կոլեկտիվ ապահովագրությունն անց է կացվում առանց բժշկական զննության։*

*ԾԱՆՈԹ — Տանն աշխատող կոոպերացված տնայնագործներին և արհեստավորներին ապահովագրելիս հաշվի չեն առնվում այն անձինք, վորոնք լրիվ կորցրել են իրենց աշխատունակությունը, ինչպես նաև 60 տարեկանից ավելի բարձր հասակ ունեցողները։*

### § 2.

*Կյանքի կոլեկտիվ ապահովագրության գծով Պ[illegible] պատասխանատվությունն է կրում (վճարում*

73.768
08.11.2013

և ապահովագրական վարձատրություն) ապահովագրվածը վորևէ պատճառով մահանալու դեպքում և այն դեպքում, յերբ նա դժբախտ պատահարի հետևանքով լրիվ կամ մասնակի կերպով կորցնում է իր աշխատունակությունը։

ԾԱՆՈԹ.— 1. Այն դեպքում, յերբ ապահովագրվածի մահն առաջ է գալիս այն անձի դիտավորության հետևանքով, վորը նշանակված է ապահովագրական գումար ստանալու համար, կամ յերբ դատարանի վորոշմամբ բռնագրավվում է ապահովագրվածի գույքը—Պետապը ապահովագրական վարձատրություն չի վճարում։

2. Պետապն ապահովագրական վարձատրություն չի վճարում, յեթե հաշմանդամությունը դժբախտ պատահարի հետևանք չի յեղել, այլ բժշկվելուց հետո առաջ յեկած հիվանդության կամ մի վորևէ մարմնական վնասվածքի հետևանքով։

§ 3.

Ապահովագրությունն կնքվում է այն պայմանով միայն, յեթե ապահովագրվող կոլլեկտիվի աշխատավորության առկա կազմի վոչ պակաս քան 50 % (կեսը) գրավոր կերպով ցանկություն է հայտնում ապահովագրվելու։ Հետագայում, յեթե ապահովագրվածների թիվը ապահովագրական տարվա ընթացքում 50%-ից իջնում է, ապա դրանով պայմանագիրը չի խախտվում։

Խոշոր ձեռնարկություններում, կոլտնտեսություններում, արտելներում, ՄՏԿ-ում և այլն կոլլեկտիվ պայմանագրեր թույլատրվում են կնքել առանձին կամ մի քանի ցեխերում, բաժիններում, ագրոկետներում, կոլտնտեսային բրիգադներում և այլ կազմակերպչական օղակներում այն դեպքում միայն, յեթե ապա-



368
Ի-11

հովագրությանը մասնակցում է վոչ պակաս քան ապահովագրվող ցեխի, բաժնի, կոլտնտեսային բրիգադի 50 %-ը։

Կոլլեկտիվ ապահովագրությանը կարող են մասնակցել այն բոլոր աշխատավորները, վորոնք ապահովագրությունը ձևակերպելու պահին ապահովագրվող կոլլեկտիվում են աշխատում, յեթե ապահովագրվել ցանկանալու վերաբերյալ հայտարարությունը ստորագրելիս նրանք հիվանդության պատճառով արձակուրդում չեն գտնվում։

Ապահովագրված կոլլեկտիվի այն աշխատավորները, վորոնք սկզբում ապահովագրության մեջ մտցված չեն յեղել, կարող են լրացուցիչ կերպով ապահովագրության մեջ մտնել տվյալ կոլլեկտիվի ապահովագրության ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում։

ԾԱՆՈԹ.—10 հոգուց ավելի պակաս անդամներ ունեցող կոլլեկտիվում անհրաժեշտ է, վոր նրանք 100 տոկոսով մասնակցեն ապահովագրությանը։

§ 4.

Ըստ կոլլեկտիվի ապահովագրության Պետապն ապահովագրական վկայական է տալիս ապահովագրվող կոլլեկտիվի հասարակական կազմակերպության անունով, վորի հիման վրա այդ կազմակերպությունն իր կողմից յուրաքանչյուր առանձին ապահովագրվողին վկայական է տալիս ապահովագրելու մասին։

§ 5.

Կոլլեկտիվ ապահովագրության գծով Պետապի պատասխանատվությունը սկսվում է այն օրվանից, յերբ բոլոր ապահովագրվածները տվյալ ձեռնարկության համար սահմանված կարգով մուծում են ապա-

հովագրողին ապահովագրական վճարումները։ Ապահովագրությանը լրացուցիչ կերպով միացողների համար պատասխանատվության սկիզբը համարվում է այն օրվա 24 ժամը, յերբ նրանցից կստացվի առաջին վճարումը։

§ 6.

Առանձին կոլեկտիվում ապահովագրությունը կնքվում է 3000 ռ., 2000 ռ. 1000 ռ. և 500 ռ. գումարով յուրաքանչյուր ապահովագրվողին։ Մեկ կոլեկտիվում թույլատրվում են յերկուսից վոչ ավելի տարբեր գումարներ, ընդվորում ավելի քիչ գումարով ապահովագրվածների թիվը տվյալ կոլեկտիվում ապահովագրվածների ընդհանուր թվի 15%-ից ավելի չպետք է լինի։

§ 7.

Ապահովագրական վճարումը կատարվում է հետևյալ չափերով.

6 ռ. տարեկան . . 500 ռ. ապահով. գումարում
12 ռ. » . . 1000 ռ. » »
24 ռ. » . . 2000 ռ. » »
36 ռ. » . . 3000 ռ. » »

§ 8.

Ապահովագրական վճարումները կատարվում են բոլոր ապահովագրվածների համար յուրաքանչյուր ժամկետի սկզբում, ընդվորում թույլատրվում է վճարել մաս-մաս կիսամյակներով, յեռամսյակներով և ամսե-ամիս։

Ապահովագրական վկայականում նշված վորևէ ժամկետում ապահովագրական վճարում չկատարելու դեպքում, Պետապի պատասխանատվությունը վերջա-



նում է այն օրվանից, յերբ ապահովագրական վճարումն է կատարված։

ԾԱՆՈԹ.—Այն դեպքերում, յերբ Պետապի կողմից պարզվում է, վոր վճարումները վոչ ապահովագրվածների մեղքով չեն կատարված յեղել, Պետապի պատասխանատվությունը ապահովագրական դեպքերի նկատմամբ չի վերանում։

Այն ապահովագրվածները, վորոնք հերթական արձակուրդի, հիվանդության պատճառով արձակուրդի կամ գործուղման մեջ են գտնվում և հերթական վճարումներ չեն կատարել, ապահովագրված են համարվում արձակուրդի կամ գործուղման ամբողջ ընթացքում, բայց վոչ ավելի քան մինչև ապահովագրական տարվա վերջը։ Արձակուրդից կամ գործուղումից վերադառնալուց հետո բոլոր ժամկետանց վճարումները պետք է մարվեն։ Իսկ ապահովագրվածի մահվան հաշմանդամության դեպքում, ժամկետանց վճարումները պահվում են ապահովագրական վարձատրությունից։

Այն ապահովագրվածները, վորոնք հիվանդության ժամանակ հաշմանդամության են փոխադրված, ապահովագրված են համարվում նույն պայմաններով, ինչ վոր հիվանդության պատճառով արձակուրդի մեջ գտնվողները։

§ 9.

Կոլեկտիվ պայմանագիրը կնքվում է մեկ տարով վերանորոգելու իրավունքով։

ԾԱՆՈԹ.—Ապահովագրությունը վերանորոգվում է Պետապի կողմից նոր ապահովագրական վկայական տալու միջոցով։ Իսկ յեթե ապահովագրական տարվա վերջում կոլեկտիվում ապահովագրվածները մնացել են վոչ պակաս քան տվյալ կոլեկտիվի բոլոր աշխատավորների 50 տոկոսը, ապա ապահովագրությունը կարելի յե վերանորոգել նաև նախկին ապահովագրական վկայականի վրա մակագրելու միջոցով։

Ապահովագրության վերանորոգելու դեպքում նոր ժամկետով ապահովագրվել կարող են նրանք, ովքեր ապահովագրի վերականգնման ժամանակ հիվանդության պատճառով արձակուրդի, գործուղման կամ հերթական արձակուրդի մեջ են գտնվում, ինչպես նաև այն ապահովագրվածները, վորոնք ապահովագրության ժամկետի յերկրորդ կիսամյակում թողել են աշխատանքը կամ չեն ծառայել տվյալ կոլեկտիվում կամ էլ հաշմանդամության են փոխադրված։

§ 10.

Ապահովագրական վարձատրություն պետք է պահանջել Պետապի այն օրգանից, վորին ապահովագրական վկայական է տվել և վոչ ուշ քան դաշնակից հանրապետության օրենսդրությամբ սահմանված վաղեմության ժամկետում, վորից հետո ապահովագրված պահանջները չպետք է բավարարվեն։

§ 11.

Այն անձը, վորը նշանակված է ապահովագրության գումար ստանալու համար, պետք է Պետապի օրգանին հետևյալ փաստաթղթերը ներկայացնի։

ա) տեղեկանք ապահովագրողից (կազմակերպությունից) մահացածի ապահովագրության մասին, ցույց տալով, թե յերբ և վոր ժամկետներում են կատարվել նրա համար վճարումները և ում է ապահովագրողը նշանակել ապահովագրական գումար ստանալու համար.

բ) վկայական Զագսից ապահովագրվածի մահվան մասին.

գ) վկայական բժշկից, վորը բուժել է ապահովագրվածին նրա վերջին հիվանդության ժամանակ, յեթե



Զագսի վկայականի մեջ չի հիշատակված մահվան պատճառը։

ԾԱՆՈԹ.—Յեթե մահը բռնի է յեղել, ապա պետք է ներկայացնել ապահովագրվածի մահվան պատճառների վերաբերյալ կատարված հետաքննության ակտի վավերացման պատճենը։

Այն դեպքում, յերբ ապահովագրական գումար ստանալու համար նշանակված անձը, ապահովագրվածի մահվան վերաբերյալ գործի կապակցությամբ քրեական պատասխանատվության է յենթարկվում, պետք է ներկայացնել ուժի մեջ մտած դատավճռի կամ դատական օրգանի վորոշման վավերացման պատճենն այն մասին, վոր հիշյալ անձի վերաբերմամբ քննությունը դադարեցված է։

§ 12.

Ապահովագրական վարձատրությունը վճարվում է այն անձին, վորին ապահովագրվողը մատնացույց է արել ապահովագրության կնքելու ժամանակ։

Յեթե ապահովագրվածի կենդանության ժամանակ այդ արված չի յեղել, ապա ապահովագրական գումարը վճարվում է՝

1. Ապահովագրվածի կենդանի մնացած ամուսնուն և զավակներին կամ դրանց բացակայության դեպքում՝ ծնողներին։

2. 1-ին կետում նշված անձանց բացակայության դեպքում ապահովագրական վարձատրությունը վճարվում է ապահովագրվածի խնամքի տակ գտնվող ծնողներին կամ յեղբայրներին և քույրերին։

§ 13.

Ապահովագրվածի հետ դժբախտ պատահար տեղի ունենալու դեպքում, ապահովագրական վարձատրու-

43.768

թյուն ստանալու համար բացի ապահով... կանքից Պետապին պետք է ներկայացնել դժբախտ պատահարի վերաբերյալ ակտ կամ արձանագրության պատճենը կամ նրան փոխարինող փաստաթուղթ, որն ապացուցում է, որ ապահովագրվածի հետ իրոք դժբախտ պատահար է տեղի ունեցել։

§ 14.

Ապահովագրվածի հաշմանդամության աստիճանը, որ դժբախտ պատահարի հետևանքով է յեղել, որոշվում է բժշկությունից հետո, բժշկական Էքսպերտիզայի Բյուրոյի յեզրակացության հիման վրա։

Այն դեպքերում, յերբ ապահովագրվածը մշտապես և լրիվ կորցնում է իր աշխատունակությունը, Պետապը ապահովագրական գումարը լրիվ վճարում է, իսկ աշխատունակությունը մասնակի կերպով կորցնելու դեպքում՝ կորցված աշխատունակությանը համեմատ։

§ 15.

Աշխատունակությունը մշտապես լրիվ կամ մասնակի կերպով կորցնելու դեպքում տուժողի ապահովագրությունը շարունակվում է մինչև ապահովագրական տարվա վերջը և անկախ հաշմանդամության համար ապահովագրական վարձատրության վճարելուց, այդպիսին լրիվ վճարվում է նաև ապահովագրվածի մահանալու դեպքում, յեթե այդ մահը տեղի յե ունենում ապահովագրական պայմանագրի ժամկետը վերանալուց վոչ ուշ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0215958
368
խ-11

Գլավլիտ Ն ... ինի տպարան, Յերևան